«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1 - 3

27 օգոստոսի 2020 թվականի (հեռավար կարգով)

ՀՊՏՀ Լեզուների և Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոններին արտալսարանային ժամեր հատկացնելու մասին

ՀՊՏՀ հեռակա ուսուցման ընդունելության թեստերի կազմման, պաշտոնական կայքի, փաստաթղթերի, «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդեսի և «Ամբերդ» տեղեկագրի թարգմանության աշխատանքները պատշաճ իրականացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. 2020-2021 ուսումնական տարում «ՀՊՏՀ» ՊՈԱԿ Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնին հատկացնել 100 արտալսարանային ժամ՝ ՀՊՏՀ հեռակա ուսուցման ընդունելության թեստերի կազմման համար:
2. 2020-2021 ուսումնական տարում «ՀՊՏՀ» ՊՈԱԿ Լեզուների ամբիոնին հատկացնել 600 արտալսարանային ժամ՝ ՀՊՏՀ պաշտոնական կայքի, փաստաթղթերի, «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդեսի և «Ամբերդ» տեղեկագրի թարգմանության համար:
3. Հանձնարարել Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչին՝ 2020-2021 ուսումնական տարում արտալսարանային ժամերը հատկացնել ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի այն ներկայացուցիչներին, ովքեր ներգրավվելու են հեռակա ուսուցման «Մաթեմատիկա» առարկայի քննական հանձնաժողովում:
4. Հանձնարարել Լեզուների ամբիոնի վարիչին՝ 2020-2021 ուսումնական տարում արտալսարանային ժամերը հատկացնել ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի այն ներկայացուցիչներին, ովքեր իրականացնելու են «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդեսի և «Ամբերդ» տեղեկագրի խմբագրական և թարգմանչական, ինչպես նաև ՀՊՏՀ կայքի ռուսերեն և փաստաթղթերի անգլերեն ու ռուսերեն լեզուներով թարգմանելու աշխատանքները:
5. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Գրիգորյանին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ա. Գրիգորյան**

2020 թ. օգոստոսի 27
Երևան